

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԵԼԻ ԼԻՍԻՑՅԱՆ
(ծննդյան 125-ամյակի առթիվ)
Լ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ստեփան Դանիելի Լիսիցյանը պատկանում է հայ ականավոր գիտնականների ավագ սերունդին, գիտնականներ, որոնց բազմակողմանի գործունեությունը լայն ճանաչում է գտել դեռևս անցյալ դարի վերջերին։ Իր վյանքի գրեթե 60 տարին նա նվիրել է գիտությանը և հայ ժողովրդի լուսավորության գործին։



Ստեփան Դանիելի Լիսիցյանը ծնվել է 1865 թ. սեպտեմբերի 23-ին, Թիֆլիսում, բժշկի ընտանիքում։ 1884 թ. Թիֆլիսի I արական գիմնազիայի ավարտելուց հետո նա ընդունվում է Նովոռոսիյսկի (Օդեսա) համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, իսկ 1887 թ. երրորդ կուրսից, փո-

խաղըվում է Վարշավայի համալսարան՝ սովորելու նույն մասնագիտության ֆակուլտետում, որն ավարտում է 1889 թ.: Նույն թվականին նա հրավիրվում է Վադարշապատ, որպես Գեորգյան ճեմարանի դասախոս, սակայն երկու տարի անց մեղադրվում է ուսանողների՝ ճեմարանի դեկավարության դեմ ելույթներ կազմակերպելու մեջ, որի համար և հեռացվում է:

1891 թ. Ս. Լիսիցյանը տեղափոխվում է Թիֆլիս: Այստեղ նա ծավալում է մանկավարժական, հրատարակչական, գրական, գիտական և հասարակական լայն գործունեություն: Մի քանի տարի աշխատակցում է «Տարազ» շաբաթաթերթին, 1892—1893 թթ. գլխավորում է նաև դրա խմբագրական-հրատարակչական աշխատանքը: Միաժամանակ որպես մանկագիր և թարգմանիչ, ակտիվ մասնակցություն է ցուցաբերում «Աղբյուր» պատկերազարդ պարբերական հանդեսին, որն իր շուրջն էր համախմբել հայ գրողների, մանկավարժների և հասարակական գործիչների մի փայլուն համաստեղություն:

Ս. Լիսիցյանն Անդրկովկասում հայ հրատարակչական գործի կազմակերպիչներից էր: Տասը տարուց ավելի (1892—1903 թթ.) նա Թիֆլիսի «Հայոց հրատարակչական ընկերության» խմբագրական կոլեգիայի քարտուղարն էր: Ընկերությունը ժամանակին նշանակալի դեպ է խաղացել հայերի մշակութային կյանքում: Երբ կառավարության հրահանգով այն արգելվում է, Լիսիցյանը հիմնում է «Ստ. Լիսիցյան և ընկերություն» հրատարակչական ֆիրման (1903—1905 թթ.), որը պետք է հայերեն հրատարակեր եվրոպական և հայ դասական տրական երկեր: Հետագայում նա հրատարակչական ֆիրմայի ողջ ունեցվածքը հանձնում է հայ գրողների «Կովկասի հայոց հրատարակչական ընկերությանը» և ընդհուպ մինչև 1921 թ. մնում է նրա ակտիվ անդամը:

Վաստակավոր գիտնականը Թիֆլիսում ծավալում է նաև եռանդուն մանկավարժական գործունեություն: 1894 թ. աշխատանքի է հրավիրվում Ներսիսյան դպրոց և մինչև 1915 թ. անընդմեջ դասավանդում այնտեղ:

Լիսիցյանը վաղուց ձգտում էր ստեղծել իր դպրոցը, ինչպես նաև մանկական հանդեսը, և միայն 1898 թ. է թույլտվություն ստանում իր տիկնոջ հետ բացելու երկսեռ տարրական դպրոց, որը ցարիզմի պայմաններում հազվադեպ երևույթ էր: 1911—1921 թթ. դպրոցն ունեցել է գիմնազիայի կարգավիճակ: Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո այն նախ վերափոխվում է աշխատանքային դպրոցի, իսկ հետագայում՝ տեխնիկումի, և Լիսիցյանը մնում է այդ հաստատությունների անփոփոխ տնօրենը և պատմության ուսուցիչը: Օգտագործելով ձեռք բերած փորձն ու գիտելիքները, նա ձգտել է գործնականում իրականացնել ուսուցման առաջադեմ գաղափարները և մեթոդները՝ հաշվի առնելով տեղական պայմանների առանձնահատկությունները:

Լիսիցյանի մանկավարժական-լուսավորական գործունեության մյուս կարևոր փուլը «Հասկերի»՝ արևելահայերի մեջ հետագայում լայն ճանաչում ստացած մանկական հանդեսի հրատարակումն է (1905—1917, 1922 թթ.): Նրան հաջողվում է հանդեսի շուրջ համախմբել հայ գրականության և արվեստի նշանավոր ներկայացուցիչներին (Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Ալ. Շիրազյան, Ղ. Աղայան, Հ. Հովհաննիսյան, Վ. Փափազյան, Ա. Խնկոյան, Ա. Հայրապետյան, Գ. Բաշինջաղյան, Վ. Սուրենյանց, Փ. Թերլեմեզյան, Ե. Թադևոսյան, Վ. Ախիկյան և ուրիշներ): Նա ոչ միայն խմբագրում և հրատարակում էր ամսագիրը, այլև հանդես էր գալիս որպես մանկագիր ու թարգմանիչ, հայ պատանի ընթերցողին հաղորդակից դարձնելով համաշխարհային գրականության ժառանգությանը:

Առանձնապես հայտնի է «Հասկերում» տպագրված նրա «Հայրենի առասպելներից և վեպերից» պատմվածքների շարքը, որը հետագայում լույս տեսավ առանձին գրքով (1940 թ.), իսկ «Աբու Հասանի մաշիկները» հեքիաթը լայն ճանաչում ստացավ: Նրա գրչին է պատկանում նաև «Հասկերի» «Մանկավարժական զբոսարան» (26 պրակ) հավելվածում լրագրված հոդ-

վածների թարգմանության (ռուսերենից և մի շարք եվրոպական լեզուներից) մեծ մասը:

Ս. Լիսիցյանի գիտամանկավարժական գործունեության մեջ որոշակի առիթ է գրավում 1907—1922 թթ. (Հ. Թումանյանի և Լ. Շանթի հետ) Թիֆլիսում հրատարակված «Լուսաբեր» հայոց լեզվի I—V դասարանների դասագիրքը: «Լուսաբերում», որը հետևում էր ժամանակի առաջադեմ գիտամանկավարժական գաղափարներին, զգալի չափով արտացոլում էին «Լիսիցյան» գիմնազիայում կիրառվող դեմոկրատական կրթության և դաստիարակության սկզբունքները: «Լուսաբերը» մեծ դեր խաղաց հայ երեսնանների կրթության ու դաստիարակության գործում և երկար ժամանակ օգտագործվում էր աշխարհի տարբեր երկրների հայկական դպրոցներում, իսկ Անդրկովկասում 1907—1922 թթ. հայոց լեզվի գրեթե միակ դասագիրքն էր: Լիսիցյանի իրականացրեց «Լուսաբերի» հրատարակությունը նաև արևմտահայերեն՝ Կոստանդնուպոլսում, որտեղ այն լույս տեսավ 1911 թ. մինչև 1950-ական թվականների կեսերը (տե՛ս Ա. Տեր-Խաչատրյան, Մատենագիտություն և լեզու Շանթի, Բելյուսթ, 1969, էջ 27—29), Ուսուցման մեթոդիկայի կատարելագործման առումով մեծ դեր խաղացին «Լուսաբերին» կից ուսումնական-մեթոդական ձեռնարկները՝ «Լուսաբերի ուղեցույցը» և «Գրավոր վարժությունները»:

Գիտամանկավարժական և հրատարակչական գործունեությունը Լիսիցյանը զուգակցում էր գրականագիտական աշխատանքի հետ: Տակավին XIX դ. վերջերին նա հանդես եկավ գրականագիտական մի շարք աշխատություններիով՝ «Հայ գրականությունը և իրականությունը» (1893 թ.), «Ռուս դրականության ուղղությունները XVIII—XIX դդ. սկզբում» (1899 թ.), 1899 թ. լույս է տեսնում «Պուշկինը, նրա կյանքը և գործունեությունը (ծննդյան 100-ամյակի առթիվ)» մենագրությունը, իսկ ավելի ուշ (1937 թ.)՝ «Պուշկինը Հայաստանում» հոդվածը՝ իր իսկ կազմած Ա. Ս. Պուշկինի՝ Հայաստանի ճամփորդության երթուղու քարտեզով:

Լիսիցյանի գրականագիտական ուսումնասիրությունները անխզելիորեն կապված են նրա թարգմանչական գործունեության հետ: Լինելով գիտության և արվեստի մեջ առաջադեմ գաղափարների ջատագով, նա ձգտել է թարգմանությունների միջոցով հայ ընթերցողին հաղորդակից դարձնել ժամանակի նորագույն գիտական տեսություններին և ուսուստասահմանյան դրականության լավագույն նմուշներին: Ազատ տիրապետելով ռուսերենին, ուկրաիներենին, բելոռուսերենին, վրացերենին և եվրոպական մի շարք լեզուների (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, լեհերեն), ինչպես նաև լատիներենին ու հին հունարենին, Ս. Լիսիցյանը բազմաթիվ թարգմանություններ է արել գիտական, մանկավարժական, գեղարվեստական գրականությունից: Հատկանշական է նրա մասնակցությունը Խ. Ֆ. Լինչի «Հայաստան» երկհատոր աշխատության՝ անգլերենից ռուսերեն գիտական թարգմանությունը: Գ. Դարվինի ուսմունքի ժողովրդականացմանը ծառայեցին Լիսիցյանի թարգմանած աշխատությունները՝ Ա. Ուոլլեսի «Հրաշալի դարը» (անգլերենից), Կ. Տիմիրյազևի «Դարվինը և նրա ուսմունքը» (ռուսերենից) և այլն:

Լիսիցյանի գեղարվեստական գործերի թարգմանությունների շարքում իր ուրույն տեղն ունի Հ. Սենկևիչի «Յո՞ երթաս» վեպը, որը նա բնագրից թարգմանել և հրատարակել է հեղինակի կենդանության օրոք (1898 թ.): Հաջորդ՝ 1912 թ. հրատարակության համար նա գրել է նախաբան՝ լեհ նշանավոր գրողի կյանքի ու ստեղծագործության մասին և կազմել ծանոթագրություններ: Խորհրդային շրջանում գիրքը վերահրատարակվել է 1961 և 1983 թթ.:

Լիսիցյանի բազմաբնույթ ժառանգության մեջ հատուկ տեղ ունի նրա վաստակը Հայաստանում ազգագրական ու աշխարհագրական գիտությունների զարգացման գործում:

1924 թ. Հայաստանի կառավարության հրավերով Լիսիցյանը Թիֆլիսից տեղափոխվում է Երևան, որտեղ սկսվում է գործունեության մի նոր բեղմնավոր շրջան: Նա 1924—1947 թթ. աշխատում է տեղի համալսարանում, գասավանդելով Հայաստանի և Անդրկովկասի ֆիզիկական և պատմական աշխարհագրություն, հետազայում նաև ազգագրություն, ղեկավարում ասպիրանտների աշխատանքը: Դասախոսում է նաև Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտում (1938—1943 թթ.):

Որպես ՀԽՍՀ լուսժողովատիև կից մեթոդական խորհրդի անդամ և կենտրոնական գավառագիտական բյուրոյի գիտական քարտուղար, նա 1920-ական թվականներին մեծ դեր է խաղացել հանրապետությունում գավառագիտական աշխատանքի կազմակերպման մեջ: Նրա գործուն մասնակցությամբ խորհրդային Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում ստեղծվել է գավառագիտական կազմակերպությունների ցանց:

Հատկապես մեծ է Լիսիցյանի ներդրումը ազգագրական գիտության կազմակերպման և զարգացման ասպարեզում, որտեղ ի հայտ են եկել անխնջ հետազոտողի և գիտության հմուտ կազմակերպչի շնորհները: Ազգագրությամբ Լիսիցյանը սկսել է զբաղվել դեռևս 1920-ական թվականներին՝ մինչև 1930-ական թվականների կեսը՝ լինելով Թիֆլիսի Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի (ԿՊՀԻ) գիտական աշխատակից: Այդ տարիներին նա ինստիտուտի հանձնարարությամբ ձեռնարկել և իրականացրել է ազգագրական մի շարք գիտարշավներ, հարուստ դաշտային նյութեր հավաքելով ինչպես տեղաբնիկներից, այնպես էլ գաղթական հայերից: Այդ հետազոտությունների արդյունքը հոդվածների շարքն էր՝ նվիրված մասնավորապես հայ գյուղական բնակարանին և դրա յուրահատկությանը Հայաստանի պատմա-աղագրական տարբեր շրջաններում: Լիսիցյանն առաջինն էր, որ ուղարկություն դարձրեց «գրիտատան» ճարտարապետական կառուցվածքի և հայոց պաշտամունքային կառույցների ծագումնաբանական ընդհանրություններին:

1928 թ. Լիսիցյանը նշանակվում է Հայաստանի պետական պատմական թանգարանի ազգագրության բաժնի վարիչ, որտեղ աշխատում է մինչև կյանքի վերջը (1947 թ.): Հենց այդ շրջանին է վերաբերում նրա եռանդուն գործունեությունը՝ հանրապետությունում ազգագրությունը կազմակերպելու և զարգացնելու բնագավառում: Լավ գիտակցելով ընթացիկ պահի առանձնահատկությունը, Լիսիցյանը ազգագրական նյութեր գրի առնելը համարում էր առաջնահերթ և անհետաձգելի խնդիր: Գիտնականի բացառիկ եռանդի, ընդարձակ գիտելիքների շնորհիվ թանգարանի ազգագրության բաժինը կարճ ժամանակամիջոցում համարվեց արժեքավոր հավաքածուներով, ինչպես նաև գիտական բարձր մակարդակով կազմված ու համակարգված գրացուցակներով:

Հայ ազգագրության զարգացման մեջ անգնահատելի ներդրում էր Լիսիցյանի կազմած «Ազգագրական հարցարանը», որը հսկայական տեսական և գործնական լուրջ նշանակություն ունեցավ ու ահա արդեն չորս տասնամյակի վեր ծառայում է որպես կարևոր մեթոդական ձեռնարկ: Այն հրատարակվեց հեղինակի մահվանից երկու շաբաթ առաջ (1946) և «ասես կտակ հանդիսացավ Հայաստանի ազգագրագետների նոր սերնդի համար» (Հ. Կուսիկյան):

1930—1940 թթ. Լիսիցյանն ավարտում է հայ ազգագրությանը վերաբերող հիմնարար աշխատությունների շարադրումը: Դրանք լույս տեսան հետմահու՝ տարբեր ժամանակներում:

Ազգագրական նյութի հավաքման ուղղությամբ կատարած բազմամյա աշխատանքի և Հայաստանի պատմաազգագրական առանձին շրջանների ուսումնասիրության արդյունքները շարադրված են նրա «Զանգեզուրի հայերը» (1968) և «Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ)» (1981) մենագրություններում: Դրանց գիտական արժեքը նախ և առաջ որոշվում է հազվագյուտ գաղտնիքի նյութերով, որը հեղինակը հավաքել է

1920-ական թվականների կեսերին (Լեոնային Ղարաբաղ) և 1930-ական թվականների տեղաբնակներին (Զանգեզուր)։ Խորհրդային ազգագրություն մեջ առաջին անգամ պատմաազգագրական առանձին շրջաններ ենթարկվել են մասնագիտական հատուկ ուսումնասիրության։

Լիսիցյանը լուսաբանեց նշված շրջանների հայերի տնտեսական, հասարակական և հոգևոր կյանքի բոլոր կողմերը, բացահայտեց դրանց տեղական առանձնահատկությունները և պատմամշակութային ընդհանրությունները հայ էթնոսի հետ ամբողջությամբ վերցրած։

Լիսիցյանի հիմնարար աշխատանքներից է նաև «Ակնարկներ նախահեղափոխական Հայաստանի ազգագրության» մենագրությունը, որտեղ ի մի են բերված հայ ազգագրության նվաճումները։ Հնարավոր ամբողջությամբ ներկայացված է հայոց ավանդութային նյութական ու հոգևոր մշակույթը և տնտեսական զբաղմունքների ու սոցիալական կյանքի ընդհանուր պատկերը՝ էթնիկ առանձնահատկություններով։

Ս. Լիսիցյանի ազգագրական գործունեությունն անհղձիկորեն կապված է եղել աշխարհագրական որոնումների հետ։ Հայաստանի ազգագրությանը և պատմությանը վերաբերող իր հետազոտություններում նա կարևոր տեղ է հատկացրել աշխարհագրական գործոնին, որի հետ կապված մանրամասնորեն ուսումնասիրել է Հայկական լեռնաշխարհի և հարևան շրջանների աշխարհագրությունը, անձամբ հետազոտելով հանրապետության բոլոր շրջանները։ Նրա բազմամյա գործունեության արգասիքը «Հայկական ԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն (ժողովրդագրության հետ միասին)» (1940) աշխատանքն է, որտեղ հանգամանորեն ներկայացված են Խորհրդային Հայաստանի տեղագրությունը, կլիման, ջրագրությունը, հողերը, բուսական և կենդանական աշխարհը, բնակչությունը և վարչական բաժանումը։ Սեղմ և հակիրճ ոճով գրված այս ձեռնարկը տվյալ հարցին վերաբերող նյութի առաջին մշակումներից մեկն է (ամբողջ Հայկական լեռնաշխարհի ընդհանուր տեսությունը մնաց ձեռագիր)։ Նա հրապարակեց նաև պատմաաշխարհագրական բնութի մի շարք հոդվածներ («Մոկսի պատմական աշխարհագրության շուրջ», «Պոմպեոսի ուղին Անդրկովկաս», «Կիմմերական ներաբջավի ուղին Անդրկովկաս» և այլն)։

Նշանակալից է Լիսիցյանի դերը Հայկական ԽՍՀ աշխարհագրական ընկերության կազմակերպման գործում։ 1935 թ. մինչև կյանքի վերջը նա ակտիվորեն մասնակցում է ընկերության գործունեությանը։

Ծրկար տարիների ընթացքում գիտնականը հարուստ նյութ է հավաքել նաև հայոց պատմության տարբեր հիմնահարցերի, հատկապես աքեմենյանների, սելևկյանների և հռոմեացոց հետ փոխհարաբերությունների վերաբերյալ։

Արտասահմանյան մի շարք երկրներում գտնվելու տարիներին (1904—1911 թթ.) դպրոցական ուսուցման նորագույն մեթոդներին ծանոթանալու և «Լուսաբերի» արևմտահայերեն տարբերակի նախապատրաստման հետ մեկտեղ, Լիսիցյանը աշխատել է Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանում, Բեռլինի և Կոստանդնուպոլսի թանգարաններում՝ հետազոտելով Հայաստանի պատմությանը վերաբերող աղբյուրները, ինչպես նաև Լեման-Հաուպտի՝ Վանից և այլ տեղերից բերված հնագիտական նյութերը։ Այդ հետազոտությունների արդյունքը պատմական բնութի մի շարք հոդվածներ են, ինչպես՝ «Տիգրան Մեծը ըստ դրամների» և այլն։ Նա առաջինը վերծանեց Գառնիի հունարեն արձանագրությունը, իսկ ավելի վաղ տվեց Զանգեզուրի կրոմլեխների պատմական մեկնաբանությունը («Կոշուն-Դաշի մեզալիթյան բնակատեղին Սիսիանում»)։ Գիտնականի արխիվում պահպանվել են ազգագրական, պատմական, աշխարհագրական և բազմաթիվ այլ նյութեր ու լուսանկարներ։ Լիսիցյանի ողջ գործունեությանն հատուկ է ուսումնասիրվող երևույթների մեկնաբանման պատմականությունը։ Հենց պատմական այդ մոտեցումով, բոլոր երևույթները շարժման, զարգացման մեջ տեսնելու և

իմաստավորելու ձգտումով է պայմանավորվում նրա գիտական հետաքրքրությունների լայն մտահորիզոնը:

Գիտամանկավարժական ասպարեզում և կադրերի պատրաստման գործում ունեցած վաստակի համար Ս. Լիսիցյանին 1941 թ. շնորհվում է պրոֆեսորի, իսկ 1945 թ.՝ ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: 1945 թ. նա պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Ս. Լիսիցյանը վախճանվեց 1947 թ. հունվարի 4-ին, Երևանում: Նշանավոր գիտնականի և մանկավարժի անունն է կրում Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժինը: 1980 թ. Ստեփան Լիսիցյանի և նրա դստեր՝ գիտության վաստակավոր գործիչ Սրբուհի Լիսիցյանի անունը շնորհվեց ՀԽՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիտական կադրինետ-արխիվին:

Ս. Լիսիցյանն իր ողջ երկարամյա կյանքը և ավելի քան կեսդարյա գործունեությունը նվիրաբերեց Հայաստանում հայագիտության, աշխարհագրության և մանկավարժական գիտությունների զարգացման գործին՝ իր հիմնարար աշխատություններով անգնահատելի ավանդ ներդնելով հայ մտավոր և հոգևոր մշակույթի գանձարանում:

СТЕПАН ДАНИЛОВИЧ ЛИСИЦИАН

(к 125-летию со дня рождения)

Л. М. ВАРДАНЯН

Р е з ю м е

Заслуженный деятель науки, профессор С. Д. Лисициан—представитель старшего поколения выдающихся армянских ученых, посвятивший свою более чем полувековую напряженную творческую деятельность служению науке и просвещению армянского народа. При фундаментальности и энциклопедичности знаний, универсальности интересов в нем тесно и органически переплелись историк, этнограф, географ, филолог, педагог, детский писатель, публицист, переводчик, издатель, общественный деятель, организатор и пропагандист науки, арменовед широкого профиля.

Особенно велик вклад С. Д. Лисициана в развитие географической и этнографической науки и этнографического музееведения в Армении. Он по праву считается основоположником армянской советской этнографии.